ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման փորձագետ Քրիստինե Ալբերտի Հայրապետյանի՝ 2026թ. հունիսի 9-ից մինչև 2026 թվականի հուլիսի 31-ն իրականացած աշխատանքների վերաբերյալ:

Ես՝ Քրիստինե Ալբերտի Հայրապետյանս, 2026թ. հունիսի 9-ից մինչև սույն թվականի հուլիսի 31-ը աշխատելով ՀՀ ՔԿԱԳ գործակալության փորձագետի պաշտոնում, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընդունում և ուսումնասիրություն, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում, ինչպես նաև դիմումների պատշաճ և ժամանակին ընթացքի ապահովում,
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերականգնում, ուղղումների և փոփոխությունների դիմումների ընդունում, ուսումնասիրություն, հաստատման և տրամադրման գործընթացի կազմակերպման հետ կապված գործառույթների իրականացնում,
- Մասնակցություն ՔԿԱԳ արխիվի վարման, պահպանության, թվայնացման և տեղեկատվության տրամադրման աշխատանքներին,
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված օրենքով սահմանված լրացուցիչ ծառայությունների դիմաց գանձվող վճարների ընդունում,
- Քաղաքացիներին խորհրդատվության տրամադրում՝ ինչպես անձնական ընդունելության, այնպես էլ հեռախոսազանգերի միջոցով՝ պատասխանելով նրանց հարցերին և պարզաբանելով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

Հարգանքով՝ Քրիստինե Հայրապետյան

31.07.2026